ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱԼԵՔՍ ԲԻԼԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) կողմից կազմակերպված «ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-25/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ Պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 2025թ. մարտի 10-ի N N Ե/479-25 գրությունը՝ ստորև ներկայացնում եմ «Ալեքս Բիլդ Գրուպ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02321291, այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

Պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) 2025թ. մարտի 10-ին վարչապետի աշխատակազմին է ներկայացրել N Ե/479-25 գրությունը, որով մասնավորապես հայտնել է հետևյալը.

Ծառայության կողմից գնումների ոլորտում մրցակցության ապահովման և խտրականության բացառման նպատակով իրականացված վերլուծությունների շրջանակում դիտարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի կարիքների համար 2024 թվականի դեկտեմբերի 16-ին տեղեկագրում հրապարակված և կազմակերպված «ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգը: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ Վարչապետի աշխատակազմի կարիքների համար շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման նպատակով 2025 թվականի հունվարի 17-ին «Ալեքս Բիլդ Գրուպ» ՍՊԸ-ի հետ Պատվիրատուի կողմից կնքվել է N ՀՀՎԱ-ԳՀԱՇՁԲ-25/12-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

պետական միասնական գրանցամատյանի՝ «Ալեքս Բիլդ Գրուպ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հանդիսանում Խաչատուր Միհրանի Ալեքսանյանը:

Գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակի (այսուհետ՝ Ցուցակ) համաձայն՝ «Խաչ Արմ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 02294286) 2023 թվականի դեկտեմբերի 30-ից մինչև 2026 թվականի հունվարի 27-ը ներառված է Ցուցակում: Ընդ որում, «Խաչ Արմ» ՍՊԸ-ն և «Ալեքս Բիլդ Գրուպ» ՍՊԸ-ն հիմնադրվել են նույն անձի՝ Խաչատուր Միհրանի Ալեքսանյանի կողմից:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները,

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն,

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը

միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ,

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից(...):

Կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող (...), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Նույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող

մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Համադրելով Ծառայության գրությամբ ներկայացված փաստական հանգամանքները և վկայակոչված իրավանորմերը՝ արձանագրում ենք, որ.

«Ալեքս Բիլդ Գրուպ» ՍՊԸ-ի և «Խաչ Արմ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02294286) միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես, երկու ընկերություններն էլ հիմնադրվել են միևնույն անձի՝ Խաչատուր Միհրանի Ալեքսանյանի կողմից:

Ըստ այդմ, ՀՀՎԱ-ԳՀԱԾՁԲ-25/12 ծածկագրերով գնանշման հարցման շրջանակներում Ընկերության հայտով ներկայացված հավաստումն առ այն, որ «Ալեքս Բիլդ Գրուպ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին (մասնավորապես, Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում), չի համապատասխանել իրականությանը, քանի որ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն հանդիսացող Խաչատուր Միհրանի Ալեքսանյանը միաժամանակ հանդիսանում է 2023 թվականի դեկտեմբերի 30-ից մինչև 2026 թվականի հունվարի 27-ը Ցուցակում ներառված «Խաչ Արմ» ՍՊԸ-ի հիմնադիրը, որպիսի հանգամանքը ինքնաբերաբար հանգեցնում է նշված ժամանակահատվածում Ընկերության գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման: Հետևաբար, Ընկերությունը՝ գնման գործընթացի շրջանակներում ներկայացնելով իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն՝ խախտել է իր իսկ կողմից ստանձնված պարտավորությունը, որը մինչև Ընկերության հետ պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետով՝ վարչապետի աշխատակազմը միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված N ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-25/12-1 պայմանագրից՝ համարելով այն մասնակիորեն լուծված, և այդ մասին պատշաճ ծանուցել Ընկերությանը՝ ապահովելով Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «Ալեքս Բիլդ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված հիմքերը և որոշում եմ՝ «Ալեքս Բիլդ Գրուպ» ՍՊԸ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ